

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ



Հայագիտությունը ծանր կորուստ կրեց: Կյանքից հեռացավ ճանաչված պատմաբան, ՀՀ վաստակավոր մանկավարժ, Երևանի պետական լսարանի Հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆեսոր Պետրոս Հովհաննեսի Հովհաննիսյանը:

Պ. Հովհաննիսյանը ծնվել է 1944 թ. հունիսի 22-ին Լենինական (այժմ՝ Գյումրի) քաղաքում, Երզնկայից գաղթած ավանդապահ հայ ընտանիքում: 1951-1961 թթ. սովորել է տեղի Վլ. Մայակովսկու անվան թիվ 5 միջնակարգ դպրոցում: Բարձր առաջադիմությամբ ավարտելով այն՝ 1962 թ. ընդունվել է ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետ: Երրորդ կուրսից գորակոչվել է խորհրդային

բանակ և ծառայել ռազմաօդային ուժերում: 1967-1970 թթ. շարունակել է ուսումնառությունը: 1970 թ. ընդունվել է համալսարանի ասպիրանտուրան և պաշտպանել «Միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությունը ակադ. Հ. Մանանդյանի աշխատություններում» թեկնածուական ատենախոսությունը:

1975 թ. ի վեր աշխատել է համալսարանի Հայոց պատմության ամբիոնում, նախ՝ որպես կաբինետի վարիչ, ապա՝ դասախոս, դոցենտ, պրոֆեսոր: 2013 թվականից առ այսօր Հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատարն էր:

Նա դասախոսել է նաև Համազգայինի՝ Բեյրութի Հայագիտական բարձրագույն դասընթացներում (1992-1993 թթ.), Սևանի Վազգենյան հոգևոր դպրոցում (1995-1999 թթ.), իսկ 1999 թվականից՝ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում (Աստվածաբանական համալսարան):

Երևանի պետական համալսարանի տարբեր ֆակուլտետներում Պ. Հովհաննիսյանը ուսուցանել է «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական գաղթավայրերի պատմություն, Միյուռքի պատմություն, Աղբյուրագիտություն, Հայագիտության պատմություն և վարել մի շարք հատուկ դասընթացներ:

Մանկավարժական աշխատանքը զուգակցել է գիտական-ստեղծագործական բեղուն աշխատանքին: Գիտական հետաքրքրությունները վերաբերում են հին ու միջնադարյան Հայաստանի մշակութային ու քաղաքական պատմությանը, աղբյուրագիտությանն ու պատմագրությանը, հայկական գաղթավայրերի, Հայկական հարցի և Միյուռքի պատմության խնդիրներին: Նա 400-ից ավելի աշխատանքների (գրքեր, ժողովածուներ, հոդվածներ, ակնարկներ) հեղինակ է: Նրա խմբագրությամբ լույս են տեսել 80-ից ավելի գիտական աշխատություններ: Նրա աշխատակցությամբ հրատարակվել են «Հայ ժողովրդի պատմությո-

յան քրեատմատիան» (հ. 1, 1981, 2007, հ. 2, 2011), «Ամենայն հայոց կաթողիկոսներ» տեղեկատու-պատկերագիրքը (2001), «Հայ եկեղեցու հանրագիտարանը» պր. Ա (2008), «Նշանավոր ճեմարանականներ» (հ. 1 և 2, 2005, 2009):

Անչափ մեծ է Պ. Հովհաննիսյանի տաղանդաշատ ներդրումը հայրենի պատմագիտական արժեքների խմբագրման և հրատարակության պատրաստելու գործում: Այս բնագավառում Պ. Հովհաննիսյանը հանդես է եկել որպես եզակի մասնագետ և ուսումնասիրող, հմուտ տեքստաբան, որն իր սեփական զարմանալի իրազեկությամբ հարստացրել է մեր դասական հրատարակիչների ավանդույթները:

Պ. Հովհաննիսյանի աշխատասիրությամբ ու խմբագրությամբ են լույս տեսել Ավետիս Պերպերյանի «Պատմություն Հայոց» (2009), Աշոտ Հովհաննիսյանի «Պատմագիտական ուսումնասիրություններ» (2007 թ.), Նիկողայոս Ադոնցի «Հայկական հարց» (1996) աշխատությունները, ինչպես նաև վերջինիս «Երկերի» Ա-Զ (2006-2012), Հ. Մանանդյանի Երկերի 7-րդ և 8-րդ հատորները (2010, 2011), Կ. Տեր-Մկրտչյանի «Հայոց եկեղեցու պատմություն» (2012) դասագիրքը և այլն, որոնք իսկապես երևույթ են մերօրյա գիտահրատարակչական մշակույթի անդաստանում: Նրա պատմագիտական նախասիրությունների տեսակետից այս ամենին սերտորեն առնչվում են իր լուրջ ներդրումները:

Մատենագիտական գրականության բնագավառում հատկապես նշելի են «Հայկական հարց. հայերի ցեղասպանությունը» ռուսերեն գրականության մատենագիտությունը, «Մովսես Խորենացի. մատենագիտությունը» ստվարածավալ աշխատությունը (2013):

Պ. Հովհաննիսյանը սիրված ուսուցիչ և դասախոս էր մայր բուհի և այլ բարձրագույն ուսումնական հիմնարկների ուսանողների և աշակերտության համար: Նա «Հայոց պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» բուհական ձեռնարկի (2000, 2012), հանրակրթական դպրոցի V-X դասարանների «Հայոց եկեղեցու պատմություն» դասագրքի (2002-2013), հանրակրթական դպրոցի VI-VII, ավագ դպրոցի X դասարանների «Հայոց պատմություն» դասագրքերի համահեղինակներից ու խմբագիրներից է:

Պ. Հովհաննիսյանը գործուն մասնակցություն է ունեցել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմություն» բազմահատորյակի 2-րդ և 3-րդ հատորների, «Հայկական Մովսեսական Հանրագիտարան», «Հայկական Համառոտ Հանրագիտարան», «Հայկական հարց», «Քրիստոնյա Հայաստան», «Ո՛վ ո՛վ է» հանրագիտարանների ստեղծման աշխատանքներին:

Պատմաբանը մասնակցել է բազմաթիվ գիտաժողովների և կոնֆերանսների (Երևան, Մոսկվա, Բեյրութ, Մոֆիա, Մոնպելիե, Մոչի և այլուր): Գիտամանկավարժական բեղուն գործունեության համար արժանացել է Հայոց եկեղեցու բարձրագույն՝ «Սուրբ Սահակ Պարթև և Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանի (2004), «Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ» կոչմանը (2009), կառավարական բազմաթիվ շնորհակալագրերի ու պատվոգրերի:

Ճանաչված գիտնականի, սիրված դասախոսի ու ազնիվ քաղաքացու հիշատակը միշտ կմնա նրան ճանաչողների, հարազատների և ուսանողների սրտերում:

ՄԻՆԱՍՅԱՆ Է. Գ.

Պատմական գիտությունների դոկտոր